

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

(Մտարարագրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мусава“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Խաջի կիրակի և տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պօլսի ընկերութիւնների մասին:—Ներքին
տեսութիւն: Նամակ Ալէքսանդրապօլից: Նա-
մակ Վաղարշապատից: Նամակ Երևանից: Նամակ
Խմբագրին: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:
Արտաքին տեսութիւն: Ֆրանսիա: Անգլիա-
կան դեսպան Գօչէն: Նամակ Թիֆլիսից:—Մշա-
կի հեռագիրներ:—Գոյտարարութիւններ:

Կ. ՊՈԼՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ- ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

II

Երբ «Մշակի» խմբագիրը հը-
րաւեր ստացաւ Կ. Պօլսի ընկե-
րութիւններից՝ ձեռք մեկնել նո-
ցա գործին Հայաստանի մէջ լոյս
սփռելու համար, նախ քան մի
տպագրական խօսք ասելը, խմբա-
գրութիւնը դիմեց մասնաւոր յա-
րաբերութիւններին, որոնցով կա-
րողանար ճիշդ հասկացողութիւն
կազմել և կատարեալ ծանօթու-
թիւն ունենալ այդ ընկերութիւն-
ներից իւրաքանչիւրի, ինչպէս և
նոցա մէջ մասնակցողների և տը-
նորինողների հետ: Ծանօթանա-
լով նոցա հետ, որչափ հնար էր,
խմբագրութիւնը հասաւ այն եզ-
րակացութեան թէ թէպէտ իւ-
րաքանչիւրը նոցանից գտնվում է
այնպիսի մի հեղինակաւոր մար-
դու ուղղակի կամ անուղղակի
հովանաւորութեան ներքոյ, ինչ-
պէս ամբողջ հայ ազգից յարգված
Ներսէս պատրիարքն է, սակայն
ոչ մինը ընկերութիւններից չէ
գտնվում այն ճանապարհի վրա,
որի վրա կանգնած են եղել հե-
լինացոց, սլավոնների և հրէից
մէջ հաստատված ազգային և կը-
րծական ընկերութիւնները: Հատ
պատճառներից մինը այն էր, որ
իւրաքանչիւրը ընկերութիւններից,
գտնվելով այնպիսի կամայականու-
թեան աշխարհում, ինչպէս թիւր-
քիւն է, չունէ ոչինչ ընդհանուր
համերաշխութեան կերպարանը,
հանդիսաւոր դիրք, հաստատ բը-
նաւորութիւն և յարատեւ պաշտո-
նական սանկցիա, ինչպէս ունէ
այդ մասամբ Կ. Պօլսի հայոց ազ-
գային ժողովը: Այսպէս որ ո՞ր-
չափ էլ պարծենայ և խորխտա-
նայ այսօր ո՞րը ուզում է այդ
ընկերութիւններից, զարձեալ դը-
ժուար է վստահութեամբ ասել

թէ վաղը որ և իցէ մի վեցերի
քէֆը ուզած լուպէն, եթէ չը լի-
նի Ներսէս պատրիարքի նման
մէկի ձեռքը, չի դադարեցնի իր
գործունէութիւնը հէնց առաջին
համարված ընկերութիւնը:

Այդ է պատճառը, որ երբ
«Մշակի» խմբագրութիւնը որո-
շեց պրօպոզանդա անել ուսա-
հայերի մէջ «Երաւատեան ընկե-
րութեան» համար, նա դատեց
թէ որովհետեւ «Երաւատեան ըն-
կերութեան» մէջ տնօրինողները
բաղկանում են աւելի թարմ և
եռանդոտ անձինքներից, վստահոյ
եթէ սկսել ուժգին կերպով նը-
պաստել այդ ընկերութեանը ուս-
սահայերի օգնութեամբ, գուցէ
կարելի կը լինի այնչափ նիւթա-
կան և բարոյական կարողութիւն
տալ նորան, որ քնացած, աւելի
տարտամ գործող ընկերութիւն-
ները, ստիպված կը լինեն մի օր
միանալ նորա հետ և տալ իրանց
միութեան այն անխախտ դիր-
քը և հաստատուն ու յարատեւ
բնաւորութիւնը, որ պէտք է
ունենայ ազգային համակրութեան
կարօտ մի ընկերութիւն: Խմբա-
գրութիւնը նաև կարծում էր, որ
այդպիսի միացած ընկերութիւնը
կարելի կը լինէր դնել հէնց ուզ-
ղակի հայոց դատին երաշխաւոր
մեծ պետութիւնների հովանաւո-
րութեան ներքոյ, որով օտոմա-
նեան տէրութիւնը չը կարողանար
մի օր տիրապետել ընկերութեան
դրամարկըր զանազան դէպքերից
օգուտ քաղելով:

Մինչդեռ մինչև այդ տենչալի
միութեան կայանալը, ուսահա-
յերը հէնց իրանք սկսեցին այս
տեղ այն տեղ քչիչել թէ Կ.
Պօլսի ընկերութիւնների վրա չեն
կարող մեծ վստահութիւն կապել,
երբ նորա չեն հիմնված մի ամուր
քարի վրա և այլն: Եկատելով
ժողովրդի այդ տրամադրութիւնը
«Մշակի» խմբագրութիւնը ան-
միջապէս սկսեց մասնաւոր յարա-
բերութիւնների մոտեւ բոլոր ըն-
կերութիւնների հետ և համազել
նոցա, որ եթէ կարելի է, շուտով
միանան և մի բարձր ու հաստատ
Փիրմայի տակ դնեն իրանց ընդ-

հանուր գործունէութիւնը, որով
կարող կը լինեն շատ աւելի շահ-
վել ուսահայերի համակրութեամբ
և նպաստով, քան թէ մինչև հի-
մայ: Այդ տեսակ առաջարկու-
թեան Կ. Պօլսի ընկերութիւննե-
րը շուտով յայտարարեցին, նմա-
նապէս մասնաւոր կերպով, թէ
նորա հաւանում են «Մշակի»
տուած խորհուրդը, վստահոյ շու-
տով կիրադորեն նորա միտքը:

Հէնց այդ միջոցին էր որ մէկ
էլ տեսանք որ մի ընկերութիւն
հրապարակ եկաւ «Հայկական միա-
բանութիւն» վերնագրով: Ուրա-
խանալով կարծեցինք թէ դա
հէնց այն միութիւնն է, որի
վրա խօսք կար, բայց, աւագ, երե-
ւաց որ դա մի ուրիշ նոր ընկե-
րութիւն է, որը ոչինչ կապ չունէ
ընդհանուր միութեան հետ,
թէպէտ կրում է նորա կեղծ
վերնագիրը: Վստահոյ հասկանա-
լի է, որ «Մշակի» խմբագրու-
թիւնը չը համակրեց այդպիսի մի
անուանական միաբանու-
թեան, այլ դատելով նորան ևս
մնացած ընկերութիւնների շար-
քում, «Մշակը» իրաւացի կերպով
անուանեց նորան միայն կապու-
թեան արդիւնք և միւս ընկերու-
թիւնների պատճէն: Մինչ այս
մինչ այն, վրա հասաւ Հայաս-
տանի սովը և ընկերութիւնների
միանալու հարցը մնաց առ ժա-
մանակ զանցաւորութեան մէջ:

Այս հանգամանքների մէջ դուրս
եկան նորերում մի քանիսները,
որոնք ներշնչվելով երեւի մի
խենթ հոսոսի դատողութիւն-
ներից, սկսեցին յարձակվել «Մը-
շակի» վրա և կնքել նորան ամեն
տեսակ անպատշաճ խօսքերով թէ
ինչու այդ լրագիրը չը համակրեց
վերոյիշեալ «Հայկական միաբա-
նութեան», որը պիտի լինի այս,
պիտի լինի այն և երկնքից աստ-
ղեր վեր բերելով միանգամից պի-
տի վառէ բոլոր հայոց երկիրը
լուսաւորութեան լուսով...

Այո՛, յիշաւի, ուրիշ բան կը
լինէր եթէ «Հայկական միաբա-
նութիւն» ասելով հասկացվէր այն-
պիսի մի հիմնարկութիւն, որը կա-

րողանար իսկապէս ներկայացնել
բոլոր ընկերութիւնների միաբա-
նութիւնը, որը ունենար ուրիշ,
աւելի հաստատ հիմունք, քան թէ
իւրաքանչիւրը մնացած ընկերու-
թիւններից, ունենար այնպիսի մի
դիրք և կազմակերպութիւն, որը
զանազանվէր միւս ընկերութիւն-
ների խախտ և փերուն դիր-
քից, որի անուան համապատաս-
խանէր այնպիսի մի գործունէու-
թիւն, որի մէջ ամփոփված լինէր
ընդհանուր ազգային միութեան
ու միաբանութեան գաղափարը,
այլ ոչ թէ նա զանազանվէր մնա-
ցած ընկերութիւններից լոկ մի
փարթամ վերնագրով, լոկ մի դար-
դակ ու փքած անունով: Եթէ
փարթամ վերնագրով բան առա-
ջանար, շատ հեշտ կը լինէր մեծ
բաներ շինել հիմնելով օրինակ
ընկերութիւններ այսպիսի ա-
նուններով՝ «Հայկական դրօշակ»,
«Հայկական յաղթութիւն», «Հայ-
կական ազատութիւն», և այլն,
դնելով այդ բոլորն էլ Ներ-
սէս պատրիարքի հովանաւորու-
թեան ներքոյ: Մինչդեռ դար-
դակ բառերով ոչինչ չի դուրս
գալ, փասն որոյ և «Մշակը» չը
յափշտակվեց «Հայկական միաբա-
նութիւն» ասված ընկերութեան
ճոխ վերնագրով, որի համար
թեթեամիտ ինքնահաւանները չը
ուշացան մեղադրել նորան ան-
հասկացողութեան մէջ... Թող ա-
սեն ուրիշները թէ ո՞վ է այս
հարցի մէջ աւելի տղայամիտը և
աւելի չը հասկացողը:

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎՈՒՅՑ

23 փետրվարի

«Մշակ»-ի ընթերցողները վաղուց է որ չունեն
ընդարձակ տեղեկութիւն Ալէքսանդրապօլից: Բայց
եթէ թղթակիցը, կամնալով վերջ դնել մի եր-
կարատեւ լուսթեան, դարձեալ վեր առնի գրելը
ձեռքը, եթէ նա ձգէ մի չըջանկատ հայեացք իր
չորս կողմը, — նկարագրութեան — ժանի ինչ անցք,
կամ ինչ հետաքրքիր թարմ լուրեր նա կարող է
հաղորդել ընթերցողներին: Մի չը տեսնված թան-
դուլիւն, վաճառականութեան, արհեստների, առ-
հասարակ ամենայն գործունէութեանց անկումն,
պարագութիւն, չքաւորութիւն, մուրացկանու-
թիւն, — ասա այն անմխիթար երևոյթները, որոնք

Թեամբ յանձնառու եղաւ փոխադրելու վանս. խորհրդանի անուամբ, մնացեալ տպագրութիւնը երբ կը ժողովրդին, չուտով կուղարկվին:

Եթէ այսպիսի յայտարարութիւն մը մեր հոգեւոր կոնցրետը, ժողովեցաւ յիշեալ դուռները և համեմատաբար ծախքը սակաւ եղաւ, սորա պատճառը մեծ մասամբ պէտք է վերաբերել հայ ժողովրդի ի սրտէ համակրութեանը և օգնութեանը: Թիֆլիսի ժողովարանի դահլիճը, ուր տեղի ունեցաւ հոգեւոր կոնցրետը, լուսաւորութիւնը և 12 դիւթ. աթոռներ ձրիապէս էր տրուած, ուստի հրապարակաւ չնորհակալութիւն ենք յայտնում Թիֆլիսի ժողովարանի գլխաւորներին և բոլոր անդամներին: Ծնորհակալութիւն ենք յայտնում մեծ. պ. Թ. և Գ. խաթանեաններին, որոնց կարգադրութեամբ ձրիապէս ստացվեցան ծաղիկներ դահլիճը զարդարելու համար: Ծնորհակալութիւն ենք յայտնում նաեւ պ. Սալինեանին և մի քանի պարոններին, որոնք կոնցրետի տալու երեկոյան ձրիապէս տուեցին 28 1/2 դիւթ. աթոռներ: Ծնորհակալութիւն դարձեալ պ. Տէր-Սարգսեանին, որ հարկաւոր եղած բոլոր թղթերը, թէ աֆիշաների և թէ տոմսակների համար, ձրիապէս տուեց, նաեւ պ. Զով. Մարտիրոսեանին, որ ձրիապէս տպագրել տուեց իւր տպարանում թէ աֆիշաները և թէ տոմսակները: Ի վերջոյ չնորհակալութիւն ենք յայտնում և Թիֆլիսի հասարակութեան, որ իր ներկայութեամբ ցոյց տուեց իր սէրը և համակրութիւնը դէպի իր թշուառ եղբայրները—Տաճկաստանի սովի երեւոյց տառապալաւ հայերը:

Յարգել խմբագիր, խնդրում ենք, որ այս հանդէսը բարեհաճէք տպագրել «Մշակ» լրագրի մօտակա համարներից մինի մէջ:

Թաղէոս քահանայ խօջալէսի թանգ, Տէր-Եղիկ, Ղազարոս սարկաւազ Յովսէփեանց:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, ապրիլի 25-ին

Լսելով որ սովոր սարսափելի կոտորածներ է անում Հայաստանի այլ և այլ տեղերում և մահաւանդ Ալաշկերտի գաւառում մեր արինակից եղբայրներին, խորը խոցվեցաւ սիրտս, ուստի մտածեցի հանգանակութիւն բանալ ինձ նման օտարական ծառայողներին մէջ յօգուտ նոցա, որ և հաւաքվեցաւ միայն 20 րոպէ: Խնդրում եմ զարկէք ուր հարկն է և բարեհաճէք տպել նուիրատուների ցուցակը ձեր պատուական լրագրում:

Համարձու՞մ Հայրապետան 1 ր., Սահակ Ոսկանեան 2 ր., Յակոբ Յակովբեան 25 Կ., Թարութիւն Վառլեան 1 ր., Պետրոս Մելիք-Պետրոսեան 1 ր., Մելիքի Գառապեան 50 Կ., Եղիա Կարապետեան 50 Կ., Խաչատուր Ոսկանեան 1 ր., Գարբիէլ Օհանջանեան 1 ր., Սիմոն Գարութիւնեան 50 Կ., Բաղդասարեան 1 ր., Գարութիւն Գրիգորեան 1 ր., Գարութիւնեան 20 Կ., Յովհաննէս Ոսկանեան 1 ր., Աղէքսանդր Գարութիւնեան 1 ր., Վաչէան 50 Կ., Գարութիւն Սափարեան 1 ր., Բաղդասար Մելիքեան 15 Կ., Թ. Ղամբարեան 20 Կ., Գարբիէլ Ալազեան 1 ր., Գաւիթ Մովսիսեան 20 Կ., Թ. Միքայէլեան 50 Կ., Գարութիւն 50 Կ., Աթանէս Միքայէլեան 50 Կ., Զով. Պետրոսեան 1 ր., Թար. Տէր-Միքայէլեան 50 Կ., Գաւիթ Խոջամիրեան 1 ր., Բնդամենը 20 րոպէ:

Պետրոս Մելիք-Պետրոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 12-ին Թիֆլիսի Գումայի մէջ քննվեցաւ ձայնաւոր թայրիովի ծանուցումն «Մշակ» լրագրի յօդուածի մասին: Այդ նիստի վրա կը խօսեցէր աւելի մանրամասնաբար հետեւեալ հանարում:

Կիրակի, մայիսի 18-ին հայ թատրոնատէրները Արծրունու թատրոնում տալու են երկրորդ ներկայացումն: Ներկայացումը հետեւեալ կերպով է կազմված. առաջին անգամ Յովնաթանի յիշատակարանը, հեղ. Գոգոլի, թարգմ. Թ. Տէր-Գրիգորեանի, հասարակութեան խնդիրըով երկրորդ անգամ «Հաշտարար դատաւորի մօտ», կոմ. 3 արար. փոխադրութիւն Թ. Տէր-Գրիգորեանի և Զաւէշտ, որի ժամանակ պ. Թ. Տէր-Գրիգորեան կը պատմէ պատկերներ ժողովրդական կեանքից, իսկ ա. փաշայեան-Տէր-Գրիգորեան կերպէ ժամանակներ: Աստուակներում կաժի կամ Վնտոնիովի, կամ զինուորական օրիւնները: Ետեւորի գնորդ սովորական ինչ ցածր են լինելու հետեւեալ կերպով. 1 օժանդ 5 ր., բազկաթոռներ I կարգ 2 ր., II և III կար-

գեր 1 ր. 50 Կ., IV և V կարգեր 1 ր. 25 Կ., աթոռներ I, II, III և IV կարգեր 1 ր., մնացածները 70 Կ., գալերէյ 30 Կ.: Տոմսակները կարելի է ստանալ Արծրունու թատրոնի կասսայում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՐԱՆՍՄԱ

Կրագիրների մէջ կարգում ենք հետեւեալ տեղեկութիւնները Ֆրանսիական կառավարութեան մասին:

Ֆրէյսիէի մինիստրութիւնը այժմ ներքին այնպիսի դժուարութիւնների է հանդիպել, որ կառավարութեան համար վատ հետեւանքներ կարող են ունենալ: Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Ժիւլ Գրեվիի այժմեան խորհրդատուները ստիպված են միաժամանակ ընդդիմադրել թէ միապետականներին, որոնք պաշտպանում են եղուիտներին, և թէ սօցիալիստներին, որոնք փորձում են բարձրացնել կոմունայի դրօշակը: Մի կողմից հազեւոր միաբանութիւնները յայտնում են, որ նրանք կառավարութեանը չեն խնդրի իրանց կանոնադրութիւնների հաստատելը, որ չեն փակի իրանց հիմնարկութիւնները մինչև կառավարութիւնը զինուորված ոյժ չը գործ դնի, միւս կողմից սօցիալիստները սպառնում են փողոցային շարժումն անել ի պատիւ 1871 թուականի կոմունայի և երբ կառավարութիւնը յայտնում է, որ այս դէպքում անքանց հետ կը վարվի օրէնքի համեմատ, նրանք պատասխանում են, որ առանց այդ սպառնալիքի դուցէ միայն 10,000 սօցիալիստներ հաւաքվէին, մինչդեռ այժմ այդ թիւը 5 անգամ կը շատանայ:

Մի և նոյն ժամանակ Ֆրանսիայի հիւսիս-արեւելեան զեպարտամենտներում սկսվում են բանւորների ժողովներ, որոնց ամենքը քաղաքական բնավորութիւն են տալիս, իսկ պատգամաւորների ժողովի մէջ արմատական կուսակցութիւնը թշնամաբար է վերաբերվում մինիստրութեանը, ասելով, որ նա բաւականաչափ արմատական չէ:

Այժմեան մինիստրութիւնը ստիպված է ընդդիմադրել այդ երկու թշնամական տարրերին, իսկ նրա անդամներից հազիւ թէ երկուսը ընդունակ մարդիկ են, միւսները ոչինչով աչքի չեն ընկնում: Ֆրէյսիէի մինիստրութեան մէջ, բացի Ֆրէյսիէից չը կայ ոչ մի օրինաւոր պետական մարդ, գոնեա այնպիսի մի եռանդոտ մարդ, որ ձգտէր հասնել մի որոշ նպատակի: Մինչև անգամ Ժիւլ-Ֆերրի բացառութիւն չէ կազմում: Այն հաստատմութիւնը, որ նա ցոյց տուեց կրթութեան օրէնքն քննելու ժամանակ, աւելի շուտ ինքնասիրութեանից էր ծագում, քան թէ համոզմունքից: Ֆերրի այնպէս հեռու է գնացել, որ յետ դառնալ չէ կարող և այդ պատճառով աշխատում է իրագործել իր նախագիծը, որպէս զի չը կորցնի մինիստրի պաշտօնը:

Ինչ կը վերաբերի միւս մինիստրներին, նրանք իսկապէս ժամանակաւորապէս են վարում իրանց պաշտօնները և այդ տեղերը պահում են աւելի ընդունակների համար: Այդ մարդկանցից մի քանիսը հիմնկուց արդէն զգում են, որ իրանց պարտականութիւնները կատարելու համար բոլորովին ոյժ չունեն: Հեռագիրը հաղորդեց, որ ներքին գործերի մինիստր Լեպրի հրաժարական տրուեց:

Նրա դրութիւնը անտանկի դարձաւ այն ժամանակից, երբ ազգային ժողովը քննում էր ազատ ժողովների օրէնքի նախագիծը, որի քննութեան ժամանակ Լեպրի բազմաթիւ սխալներ արաւ: Թէպէտ օրէնքի նախագիծը ընդունվեցաւ 263 ձայների բազմութեամբ 204-ի դէմ, բայց ներքին գործերի մինիստրը

այնքան սխալներ արաւ, որ նա բացի հրաժարական տալուց ուրիշ ելք չունէր: Դեռ ևս յայտնի չէ, թէ նրան ո՞վ կը փոխարինի, բայց եթէ այդ պաշտօնը աւելի ընդունակ և եռանդոտ մարդ չը ստանայ, այժմեան մինիստրութիւնը այդ փոփոխութեանից բոլորովին չի շահվի և բարոյապէս նոյնքան թոյլ կը լինի, որքան և առաջ:

Այժմեան մինիստրութիւնը այնուամենայնիւ կարող է յաղթող հանդիսանալ, որովհետեւ նրա բազմաթիւ հակառակորդները միատեսակ նպատակներ չունեն: Նրանք ամենքը աշխատում են իշխանութեանից զրկել Ֆրէյսիէի մինիստրութիւնը, բայց դրանով էլ վերջանում է նրանց նպատակների միատեսակ լինելը: Գուցէ այդ հանգամանքը առիթ կը տայ բոլոր հանրապետականներին միանալ, ի նկատի ունենալով այն վտանգը, որ սպառնում է հանրապետութեանը այդ կուսակցութեան անմիաբանութիւնը:

ԱՆԳԼԻԱՎԱՆ ԴԵՍՊԱՆ ԳՕՇԵՆ

Փարիզից «Polit. Corresp.» լրագրին մայիսի 11-ից գրում են:

Գոշեան Կ. Պոլսի անգլիական դեսպանը շնորհակալ էր ասելով լաւ տպագրութիւն գործեց: Պոլսի է, որ անգլիական նախկին դեսպան Լայարը Ֆրանսիական դեսպան Ֆուրնիէի հետ լաւ յարաբերութիւնների մէջ չէր: Ներքին Լայարը չափազանց մոտրիմ էր թիւրքերի հետ, ինչ կը վերաբերի Գոշեանին, նա շատ հաստատաւոր մարդ է, իսկ Անգլիայի նա թաղաքականութեան համար Թիւրքիայի վերաբերութեամբ այդպիսի մարդ է հարկաւոր: Այստեղ յայտնի են այն պատուերները, որոնք տուած են Գոշեանին, նոյնպէս և այն պատուերը, որ Բերլինի դաշնագրի կատարման է վերաբերում և որ շատ դուրեկան է Ֆրանսիայի համար: Այդ պատճառով լորդ Գրեյսի շրջաբերական էլ Ֆրանսիայի քաղաքական բարձր շրջաններում լաւ տպագրութիւն գործեց: Ֆրանսիական վաղուց դրոշմ էր Բ. Գոշեան իրագործել Բերլինի դաշնագիրը և այժմ Անգլիայից էլ պաշտպանված կը լինի: Այն հանգամանքը, որ Անգլիան այդ գործի սկզբնապատճառ է դառնում, այստեղ շատ բնական և օրինաւոր են համարում: Ամեն կողմից ցանկութիւն էր յայտնվում համաձայնութեան հասնել և այդ պատճառով պետութիւնների միջեւ գործունէութեան համար լաւ հոգ է պատրաստված: Ռուսաստանի մէջ էլ վերջիվերջոյ շրջաբերականը լաւ տպագրութիւն կը գործի, որովհետեւ նրա մէջ առկա է, որ Թիւրքիան անպատճառ պէտք է վերանորոգութիւններ մըտցնի երկրի մէջ: Իսկապէս դժուար է պատճառներ գտնել, որոնք թոյլ տային Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին չընդունել Անգլիայի առաջարկութիւնները այդ դաշնագրի իրագործելու վերաբերում: Երջարեականի երկու կէտերը չափազանց բաւականացրին Ֆրանսիայի քաղաքական շրջաններին, այդ կէտերը վերաբերում են Հայաստանի, Չերնոգորիայի և Յուստատանի հարցերին: Բ. Գոշեան իր թուութեան պատճառով թողեց այբաբաններին, որ նրանք զբաւեն այն երկրները, որոնց պէտք է ստանար Չերնոգորիան: Դրանով թիւրքաց կառավարութիւնը իր վրա մեծ պատասխանատւութիւն ընդունեց: Սկզբունքով Ֆրանսիան ընդգէմ է Սլոնյանի անկախութեան անգամ, միայն ընտրած ժամանակը չա անյարմար է գտնում: Մինչև այժմ կատարված անցքերից երեւում է, որ Բ. Գոշեան կամ չէ կամենում կամ անկարող է Սլոնյանի մէջ կարգը վերականգնել: Եթէ նա շուտապէս զորքեր կենտրոնացնէ և նորից դրանք ամրացած դիրքերը, եւրօպան ստիպված չէր լինի խառնվել այդ գործի մէջ, իսկ այժմ ամենքը ասում են, որ եւրօպական զօրքեր պէտք է ուղարկվեն Սլոնյանի յայտնի երկրները Չերնոգորիային յանձնելու համար:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻՍՏԻՑ

Էրզրում, 1 մայիս

Ոչ միայն հացի սովն է, որ վերջին ծայր կը նեղէ, կը տառապեցնէ մեր ժողովուրդը, այլ և զայն հայթայթելու և պատրաստելու միջոցները կը պակսին մեզ: Գիւղացին, որ արտաւայել հոգ մը ունի, որին վրա դրած է իր յուրը, բայց զայն մըշակելու համար չունի զոյգ մեղ, որ իր արօրը բանեցնէ: Ոչ թէ սոված առեն պարտաւորներ է

մարիկ և ուտել իր անասունները, որ քանի մի օր իւր կեանքը պահելու հնար ունենայ, այլ զինքը զարեւոյթ ստրկացնել ճգնող թուրքը զրկած է նրան իր ուժերէն, հարկերու փոխարէն խելով ուղորմել երկրագործի եղները:

Իսկ այդ ճնշումներ, այդ անտանելի հարստահարութիւններ, որքան Ֆիդիքապէս և Նիւթապէս կը տկարացնեն մեր ժողովուրդը,—այնքան առաւել բարոյական ուժ կազդեն նրան, այնքան առաւել զգալ կը տան նրան իր ստրկութիւնը, և կը վառեն նրա սիրտը ջերմ, ազգասիրական կրակով մը, և աւելի կը բորբոքեն նրա ազատասիրութեան փափագը: Ասկի կուզեմ, որ հայը իր այժմեան տառապանքներուն մէջ, այսօր խելքը գլուխը ժողոված է, և յոյսը յիսկանութիւն կերպարանափոխվելու վեհ վայրկեաններու առջև հաւած կը նկատվի: Նա համոզված է, թէ պէտք է ինք իրեն օգնէ, թէ օտարներէն չը կայ յոյս: Բայց ոչ, կայ յոյս, եթէ արժանիք ցոյց տրվի, որ գարեհոտ հուրին և սուրբին ներքև միջեր դարձած է,—մոխիր մը, որ իր մէջ կայծեր կը պարունակէ: Հայը պէտք է անկեղծօրէն ձեռք ձեռքի տայ, որ կարենայ ցոյցնել այդ արժանիքը, որ բռնութեան ձեռքը խապաւ խել չը կրցաւ:

Մեր ժողովուրդը պատերազմի փոթորիկներէն և կրակէն արած էր արդէն: Իսկ այդ նոր հարուածը մոռացնել կը տար բոլորը: Աւելի դառնապիս աղետ և պատուհան եկաւ իրեն այդ սովալի տուր: Հացի խնդիրը այսօր հայու կենսական խնդիրը դարձած է: Վան, Բաղրանդ, Ալաշկերտ, Մուշ, Բաղէշ, Բասէնները, Կարին, Տիգրանակերտ, և այլ գաւառները այժմ սովին կը տառապին:

Կ. Պոլսի սովելոց յանձնաժողովը ամեն տեղ ունի իր ձիւղերը, որ կախատեն նոթի և նուազեալ հայերուն հաց մատակարարելու: Ալաշկերտի և Բաղրանդի մէջ 106 մեռեալ ունեցանք մէկ ամսոյ մէջ, և 14 հոգի ցուրտէն ճանապարհին ստաւցան, որ հայի կերթային: Վանի գիւղերում 200-ի չափ մեռեալ ունեցանք մարտ ամսոյ մէջ: Բասեններու մէջ ևս մեռելներու թիւը պակաս չէ: Դատարը բոյսերու արմատներ, խոտ, մեռած կենդանիներու միս ուտելով կապրին: Կարնոյ փողոցներէն և շուկաներէն առանց արտատուրի անցնել կարելի չէ, զի կիսամերկ աղէիկներ, մանչեր, հարսներ և ծերունիներ, օկտոր մը հաց՝ անելով կաղաղակնէ: Բայց այս պարագաներու մէջ, որչափ թշուառ, նոյնչափ աւելի ի նախանձ շարժված է տաճիկէն, երբ կը տեսնէ, որ հայը անմասնօրէնաբար իրենց քսակը բացած, կը խնամեն իրենց աղքատներուն,—մինչդեռ տաճիկներ անողորմ կերպով աչք կը քցեն, որ չը տեսնեն իրենց աղքատները:

Թիւրքոյ անխաղաղ մարտնչը մինչև այս կէտը հասուց մեր ժողովուրդը, և դեռ ևս կը վարանի, որ բոլորովին սպանել անկարող է: Եւ դեռ ևս պիտի ներին քաղաքակիրթ ժողովուրդք, որ նմեղաւոր և կեղծ գործավարութիւն մը մինչև վերջ աւելի ևս առաջ տանի իր աղէտները: Կան տեղեր, որ մայրեր իրենց նոթի տղաքը հեռուն տանելով, կը ձգեն մի արտի փոսի մէջ, որ նոցա սըրտակոտոր աղաղակը չը լսեն,—կը մնայ հոն մահակիւր և կը մարի... Հայուհի

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 մայիս: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ հրամայած է ուսուց երկրաբանների օրինագրիաների վեցերորդ նոր հրատարակութիւն անել 15 միլիոն մետալական գումարի, իւրաքանչիւր օրինագրիան 125 ր., օրինագրիաներին 40% տարեկան եկամուտ տալով: Ստորագրական զինը նշանակված է 93 3/4 մետալական րուբլ, կամ հարիւրին 75%: Ստորագրութիւնը կընդունվի Ս. Պետերբուրգի մէջ, պետական բանկում մայիսի 19-ին, 20-ին և 21-ին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 մայիս: Պետական բանկի 50% տոմսակր առաջին շրջանի արժէ 93 3/8 ր., երկրորդ 92 1/8 ր., երրորդ 93 ր. 50 Կ., չորրորդ 93 3/8 ր., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսակր արժէ 226 ր. 75 Կ., երկրորդ 220 ր., արհիւան առաջին փոխառութեան տոմսակր արժէ 90 ր. 50 Կ., երրորդ 90 3/8 ր., երրորդ 90 ր. 50 Կ., ոսկի 7 ր. 73 Կ.: Ռուսաց 1 րուբլ 1 օնցնի վրա արժէ 25 1/2 պէնս, ռուսաց 100 ր. Գերմանիայի վրա արժէ 128 մարկ 50 պֆ., Համբուրգի վրա արժէ 217 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 268 ֆր. 25 սանտիմ: Բօրայի տրաւ մարդութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԴՈՐԻՆԻ

ՅԱՇՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան վարչութիւնը պատիւ ունի յայտնել, որ արդէն դուրս եկան մասնաւոր տակից և ծախվում են Թիֆլիսի բոլոր գրաւաճառների մօտ ընկերութեան տպագրութիւնները:

№ 4 ԲԻԶՆԵՍՈՒԹ. ԹՈՎԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՏՆԱԿԸ, Երևանի համար Պալմեր, Թարգ. օր. 6. Տէր-Մարկոսեանի: Պատկերազարդ և կաղամբ—60 կ.:

№ 5 ՄՈՐԵՍԻ ԵՒ ՆՈՐԱՆ ԶՆԱՅԻՈՒ ԼՆԱՐՆԵՐԸ, աշխ. Տէր-Բարսեղեանցի: Դիւն է 10 կոպէկ:

Օտարադաշտացիք կարող են դիմել հետեւեալ հասցեով՝ ВЪ Тифлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

Թիֆլիսի առևտրական վարչութիւնը յայտնում է Թիֆլիսի պ. պ. առևտրականներին, որ 1) ապրիլի 24-ին նշանակված առևտրական վարչութեան պաշտօնական անձանց ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԸ ԿԱՅԱՅԱՆ, որովհետև բաւականաչափ առևտրականներ ներկայ չէին և 2) որ նոյն պաշտօնական անձանց ընտրութիւնները ՆՈՐԱՆ ԶՆԱՅԻՈՒ ԼՆԱՐՆԵՐԸ 18-ին, առաւօտեան 11 ժամին:

1—3

Մի ՀՈՒՆ սէտերի տեսակից, սև գոյնի, սպիտակ բիծով կուրծքի վրա, որձ, «Տիգր» անունով, կորաւ Ալեքսանդրեան այգուց, ապրիլի 28-ի գիշերը: Գտնողին խնդրում են հասցնել Օւլապովի տան, կօնդիտէր Կեղեցի մագազինից վերև գտնված Պոլտարացի կուրսկարանը, Ստեփան Զեբեռեանի օրինակով վարձատրութեամբ:

3—3

УПРАВЛЕНИЕ

Поти Тифлисского участка Закавказской желѣзной дороги доводить до всеобщаго свѣдѣнія, что съ 10-го сего мая возобновляется движение пассажирскихъ поѣздовъ между станціями Тифлисъ и Мухетъ, но съ пересажкою у станціи Авчалы. Росписаніе отхода поѣздовъ изъ Тифлиса—прежнее, за исключеніемъ поѣзда № 8, (пятитчасоваго) который до увѣдомленія отправляемъ не будетъ.

1—1

ԲՃԵՎԱՆՈՑ

ՀԻՄՆԵՐԵՐԻ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՊՈՏԵԱՆ ԳՐԻՑ ՄԻՋԵԻ 1 ԺԱՄԱՆ:

Երկուշաբթի թ. Գալուստի կանանց հիւանդ. Գորալի վիշ ներքին հ., Բօտի նեանց կանանց և երեխաների հ., Քիւլաբեանց խորտրոգիական և աչքերի հ., Ետեմբօրսկի վիշերական և կաշու հ., Բարայեան ջրային և հոգեկան հ.:

Երեքշաբթի թ. Մինկե վիշ խորտրոգիական հ., Վ. Գօրով վիշերական և բողազի հ., Բէյլի աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կարսնօգլեան օգլ. Լիսիցե վ. Վ. Բարայեանի հ.:

Զորեքշաբթի թ. Լիսիցե վ. Բուդկովսկի ներքին հ., Ետեմբօրսկի վիշերական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւններ:

Հինգշաբթի թ. Վ. Գօրով վիշերական և բողազի հ., Բօտի նեանց կանանց և երեխաների հ., Լիսիցե վ. Վ. Բարայեանի հ., Քիւլաբեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գալուստի կանանց հ.,

ԵԳՐՈՐ ԿԱՍՈՒՄՈՎ ԵՒ ԸՆԿ.

Առևտրական տունը սրանով յայտնում է, որ գնումներին մինչև նոր փոփոխութիւնը վճարում է:

1) Հասարակ և պայմանաւոր ընթացող հաշիւներին 4 1/2%

2) Ժամանակաւոր մուտքերին. 6 ամսով 6%

9 ամսով 6 1/2%

1 տարով 7 1/2%

1 1/2 տարով 8%

2 տարով և աւելի 8 1/2%

3) Մասնաւոր գնումներին առաջին կարգի պայ ունեցողներին 9%

Գումարներ տալու ժամանակ վերցնում է

Մի ամսվայ ընթացքում 10%

և շաբաթվայ 9%

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ՏԱՆ ԳՐԱՍՆԵԱԿԸ գտնվում է իշ. ԹՈՒՄԱՆՈՎՆԵՐԻ տանը, Ալեքսանդրեան այգու դիմացը և բաց է մուտքեր ընդունելու և վերցրած պարտքերի հանգցնելու համար ՀԱՍԱՐԱԿ օրերը առաւօտեան 8—2 ժամը, իսկ ՏՈՆԵՐԻՆ առաւօտեան 8—10 ժամը:

1—3 (2)

ԵԳՐՈՐ ԿԱՍՈՒՄՈՎ ԵՒ ԸՆԿ.

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳԼԽԱՌՈՐ ԳՐԱՍՆԵԱԿԸ

Յայտնում է հասարակութեանը, որ ցանկացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսները յետագուծութեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և աւելի երկար ժամանակամիջոցում, նոր և շատ շահուէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կանտորայի մէջ, որ նոյնպէս աւանդ է այդ տեսակ տոմսակներ: Գրասենեակը գտնվում է Ալեքսանդրեան այգու հանդէպ, Թումանովի տանը:

10—10

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄՈՎՍԵՍԵԱՆ

ԲԷՀՐՈՒԹԵԱՆՑ

Որ հայոց փողոցում ամաններ է ծախում, խնդրում է այն անձը, որ նրան երեք նամակ է ուղարկել քաղաքային փոստայով, յայտնել իրան թէ ինչ հասցեով պէտք է ուղարկել պատասխանը, որովհետև նամակները օտարաւորված չեն և նրանց վրա նշանակված չէ հասցեն:

Յովհաննէս Մ. ԲԷՀՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների տարեկան հարցաքննութիւնները կըսկսուին մայիսի 15-ին և կը շարունակուին մինչև ամսի վերջը, հետեւեալ կարգով:

Մայիսի 15 և 16-ին Կուկիու Թանդոյեան օրորդական ուսումնարանում:

- 17 — Կուկիու Ս. Աստուածածին եկեղեցու ուսումն.
- 19 և 20 Կաթողիկէ Ս. Դէորդ եկեղ. ուսումն.
- 22 — Հաւաքարի Ս. Մինաս եկեղ. Իզմիրեան ուսումն.
- 23 — Զուգուրէթի և Ս. Կարապետ եկեղ. ուսումն.
- 24 — Զորաբաշի և Շամքուեցոց եկեղ. ուսումն.
- 27 և 28 Հաւաքարի Մարիամեան օրորդ. ուսումն.
- 30 և 31 Զգրաշէնի ուսումնարաններում:

Թեմ. վեր. Գ. Բարխուդարեանց

1880

ԹԻՓՅԱԽԱ

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԱՍԵՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

I

ԽԵԼԱԳԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Հեղ. Գօգոլի, Թարգ. Յ. Տէր-Գրիգորեանի

II

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՔՈՎ

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

ՀԱՇՏԱՐԱՐ ԴԱՏԱԽՈՐԻ ՄՈՏ

Կոմեդիա 3 արար., ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ Յ. Տէր-Գրիգորեանի

Անցքը պատահում է ԹԻՖԼԻՍՈՒՄ

III

Զ Ա Ի Ե Շ Տ

- 1) Պատկերներ ժողովրդական կեանքից, Բժիշկ Բ. ՆԱԽԱՍԱՐԻՅԱՆԻ կը պատմէ պ. Յ. Տէր-Գրիգորեան
 - 2) Տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան կերպէ բոմաններ, ի միջի այլոց «ԳԻՇՆԵՐԸ ԳԻՇՆԱԴԱՅՈՒՄ» երաժշտութիւն Շիֆշի:
- Տեղերի գինը ՍՈՎՈՐԱԿԱՆ է:
- Տոմսակները թէ ՆԵՐԿԱՅԱՑՆԱՆ օրը և թէ ՎԵՂՕՐՕՔ կարելի է ստանալ ԱՐԾՐՈՒՆՈՒ Թատրոնի կասսայում, ԱՄԵՆԱՅՆ օր առաւօտեան 10—2 և երեկոյան 6—8 ժամը:

3—5

ՆՈՒՒ-ԷՕՈՔԻ ԶԻՆԳԵՐ

Ամենամեծ կարելու մեքենայի ընկերութեան աշխարհային համբաւն բաւական ըլլալով յանձնել իրեն ձեռագործութիւններն կազմուածքին պարզութեամբ, հաստատութեամբ և այլալեզու աշխատութիւններն կատարելով, տնական և արուեստաւորներու պիտոյից համար, կը համառօտէ զմեզ համբելու մէկիկ մէկիկ իրենց գերազանցութիւնն ուրիշ հնարուած նման առարկայից վրա:

Վերոյիշեալ Նիու Լոնքի Օլիկեր ընկերութիւնը այս ապրիլի սկզբներն բացաւ ուրիշ գլխաւոր քաղաքներու պէս, հոս ևս՝ Թիֆլիս շտեմարան մը այլ և այլ կարելու մեքենաներով, Ատամանսկի փողոցն, Օւլապովին տունն, Լըռեանի հրապարակի մօտ անմիջապէս և կը խնդրուի խաթոնայց և պարոնայց ուզող ստանալ այսպիսի մեքենայ դիմել հոն միայն և կը խնդրուի միանգամայն չը խառնակել այս բնիկ նորեաց շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք միայն Օլիկերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խաբեն մեր պաշտպանաւորներն և դժբաղդաբար իրենց մեքենաներով կը տարակուսացունեն սեպհական մերոնց լաւութեան անունն:

Ուրիշ քաղաքներու բնակիչք ալ կրնան դիմել մեզ նմանակով թէ մեր ընթացիկ գիներուն ցուցակն ուղերու համար, որ կը խրկեմք ձրի և թէ որ և է տեղեկութիւն հարցունելու համար, որոնց կը պատասխանեմք նմանապէս մի և նոյն լեզուով և կարելի արագութեամբ, մեր երեսագիրն է:

Դ. Նեյդլինգեր. Թիֆլիս.

Գ. Նայտլինկեր

Գլխաւոր հոգաբարձու ամբողջ Ռուսաստանի և միջին Ասիայի: Խանութի մէջ կարելի է ուղղել խանգարված մեքենաները:

3—3 (2)